# ՇՆՈՐՀԱՎՈՐ ԳԱԼԻՔ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ


# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 101 - 102 (16297) ՇԱԲԱԹ, 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


## ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ





Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնի առթիվ շնորհավորական ուղերձ են հղել Վրաստանի կաթոլիկներին:

«Ի սրտե շնորհավորում եմ բոլոր նրանց, ովքեր այսօր տոնում են այս պայծառ տոնը: Քրիստոնեական այս նշանակալից տոնը մենք առնչում ենք նորացման եւ պայծառ ապագայի նկատմամբ հավատքի հետ: Թող այս օրը ձեր ընտանիքներին ու հարազատներին բերի սեր, բարօրություն, խաղաղություն եւ երջանկություն»,- ասված է Վրաստանի նախագահի շնորհավորական ուղերձում:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին երկրի կաթոլիկներին հասցեագրված իր շնորհավորական ուղերձում, մասնավորապես գրում է. «Ի սրտե շնորհավորում եմ բոլոր այն քաղաքացիներին, ում համար դեկտեմբերի 25-ը Սուրբ Ծննդյան հիասքանչ օրն է: Ծննդյան յուրաքանչյուր տոնը լավագույն ապագայի հավատ ու հույս է: Բոլորին մաղթում եմ բարօրություն, սեր, խաղաղություն»:

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՔԱՋԱՏԵՂՅԱԿ ԵՆՔ, ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐԻՆԸ ԱՐՎՈՒՄ Է ԴՐԱՆՑ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ»

*Դեկտեմբերի 26-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, հատուկ հրավիրված մամլո ասուլիսում, հանրագումարելով անցնող տարվա արդյունքները, հայտարարեց, որ երկրում պլանավորվում է բարեփոխումների նոր փուլ:*

«Մեզ մոտ արմատական բարեփոխումներ են պլանավորված առավել կարեւոր ուղղություններով... Այդ բարեփոխումներն անցկացնելով՝ մենք կստանանք համակարգային փոփոխություններ, ինչը չափազանց կարեւոր է պետության եւ մեր երկրի ուժեղացման համար»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Նրա խոսքով, պլանավորվում են ինստիտուցիոնալ փոփոխություններ, որոնց իրականացմանը կմասնակցեն խորհր-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՍՏՈՐԱԳՐՎԵՑ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ»-Ի ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

*Դեկտեմբերի 24-ին Երեւանում անցկացվեց վրաց-հայկական աշխատանքային խմբի երկրորդ նիստը: Վրացական կողմից աշխատանքային խումբը գլխավորում էր Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, իսկ հայկական կողմից՝ Հայաստանի էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանը:*

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի ներկայությամբ, դեկտեմբերի 24-ին Հայաստանի կառավարությունում ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի կառավարությունների միջեւ Հայաստանի Հանրապետության ու Վրաստանի պետա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ



**ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ.** Հարգելի՛ ընթերցողներ, սիրելի՛ հայրենակիցներ. ջերմագին շնորհավորանքներս եմ հղում ձեզ Նոր Տարվա եւ Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ: Մաղթում եմ, որ գալիք տարին ձեզ համար լինի առողջության, երջանկության, խաղաղության եւ իղձերի իրականացման տարի:

Ինձ համար մեծ պատիվ է աշխատել դեսպան հենց Վրաստանում՝ մեզ համար կարեւոր նշանակություն ունեցող երկրում, որտեղ ունենք խոշոր հայկական համայնք, որի ներկայացուցիչները դարեր շարունակ ապրել, ստեղծագործել ու արարել են հյուրընկալ վրացական հողում: Ես առավել կարեւոր եմ համարում սահմանակից երկրների հետ դիվանագիտական աշխատանքը, միեւնույն ժամանակ, իհարկե՝ կասկածի տակ չդնելով մյուս երկրների հետ հարաբերությունների կարեւորությունը:

Հարգելի՛ հայրենակիցներ. մեր նպատակն է, որ այս-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



**ՊԱԱՏԱ ԶԱՔԱՐԵԻՇՎԻԼԻ.** Թանկագին հայրենակիցներ. Ի սրտե, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Ամանորի եւ Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնի առթիվ: Ամենայն բարիք, երջանկություն, առողջություն ձեզ ու ձեր ընտանիքներին:

Պատմության գիրկն անցավ 2014-ը: Շատ հարցեր կարողացանք լուծել, թեպետ շատ են նաեւ չլուծվածները, որոնք անհանգստացնում են ոչ միայն առանձին վերցրած ձեր՝ վիրահայոց համայնքին, այլեւ վրաց ողջ հասարակայնությանը, որոնք ժառանգաբար բաժին են ընկել նախորդ իշխանությունից, շատ հիմնախնդիրներ էլ ծագել են ժամանակի թելադրանքով: Եվ դրանցից յուրաքանչյուրն իր ազդեցությունն է գործում երկրի կյանքի, մեզանից յուրաքանչյուրի բարեկեցության վրա, հետեւաբար, դրանք ընդհանուր հիմնախնդիրներ են, եւ մենք հա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



Հարգարժա՛ն պարոն Վան Բայբուրթյան.

Սիրով ու ջերմությամբ շնորհավորում եմ Ձեզ եւ խմբագրակազմին Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ: Մաղթում եմ, որ 2015 թվականը ձեզ համար լինի խաղաղության, ընտանեկան երջանկության եւ ստեղծագործական նորանոր նվաճումների տարի:

Ձեր կարեւոր աշխատանքով եւ նվիրումով Դուք բարձր եք պահում հայ լրագրողի անունն ու պատիվը եւ ամենանշանակալիցը՝ ձեր ընթերցողին տեղեկատվություն տալիս Վրաստանում եւ Հայաստանում ծավալվող իրադարձությունների մասին, նպաստում հայ ինքնության ամրապնդմանն ու պահպանմանը: Վստահ եմ, որ Ձեր խմբագրակազմը 2015 թվականին առավել կազմակերպված կշարունակի հայ ժողովրդի վերածննդի, նրա երկու հանրապետությունների զարգացման առաջընթացի ներկայացումը, ինչպես նաեւ մեր արդար դատի համար մղվող պայքարը՝ նպաստելով հային, Հայաստանը եւ հայ ժողովրդին առավել հասանելի դարձնելու աշխարհի չորս ծագերում:

Թող Տիրոջ Աջը հովանի լինի Ձեզ, զորակցի Ձեր ազգանվեր ձեռնարկումներին եւ Սուրբ Ծննդյան Լույսն առաջնորդի մեր աշխարհասփյուռ ժողովրդին՝ միասնության ու համազգային ձեռքբերումների ճանապարհին:

*Հարգանքով՝ ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ*
*Հայաստանի սփյուռքի նախարար*



**ԴԱՎԻԹ ՍԱԳԱՆԵԼԻՁԵ.** Թանկագի՛ն բարեկամներ. Մեծ սիրով շնորհավորում եմ Նոր տարվա ու Սուրբ Ծննդյան տոնի առթիվ: Թող ձեր ընտանիքներում 2015 թվականին երջանկություն, առատություն, ուրախություն թեւածի:

Եթե փորձենք գնահատել անցած 2014 թվականը, ապա կտեսնենք, որ շատ լավ գործեր են արվել, շատ հարցեր են կարգա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)



**ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆ.** Տարվա վերջին ամիսը՝ դեկտեմբերը, իր հոգեվարքն է ապրում: Բայց այս հոգեվարքը սովորական հոգեվարքի նման չէ. տարին մեռնում է, նրա փոխարեն ծնվում է մեկ ուրիշ տարի: Հենց սա է կյանքի հավերժության խորհուրդը՝ վերահառնում է խորհուրդը: Ու մարդիկ տարին մեկ՝ ամեն տարեմուտի, ու ամեն տարեսկզբի ականատեսներն են դառնում այս վերահառնումի:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)



**ԱԿԱԿԻ ՄԱՉՈՒՏԱՁԵ.** Թանկագի՛ն բարեկամներ. Սամցխե-Ջավախեթիի երկրամասի վարչակազմի եւ բազմազգ բնակչության անունից ի սրտե շնորհավորում եմ ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ:

Թող գալիք տարին խաղաղության եւ վերելքի տարի լինի մեր երկրի, իսկ անձամբ ձեր, ձեր ընթերցողների, ձեր ընտանիքների համար՝ երջանկու-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

## ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ



Թանկագին բարեկամներ.

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ Նոր տարվա եւ Սուրբ Ծննդի առթիվ: Ամենայն բարիք, հաջողություն ու երջանկություն ձեզ 1915 թվականին: Այսօր, ժողովրդավարական երկրի շինարարության այս վճռորոշ փուլում, մենք հնարավորինս անելու ենք մեր երեխաների ապագան լուսավոր ու պայծառ դարձնելու համար, ուստի հաջողությունը, առաջընթացը, միմյանց նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը կենսական անհրաժեշտություն է մեզ համար: Այն առավել նշանակալից է մեր՝ Քվեմո Քարթլիի տարածաշրջանի բազմազգ բնակչության համար: Ելնելով դրանից՝ թանկագին բարեկամներ, ձեզանից յուրաքանչյուրին մաղթում եմ հասարակական շահերին զուգորդված ձեր անձնական նպատակների կատարում, բարեկեցություն ու բարօրություն:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ Ամանորի առթիվ իմ շնորհավորանքը հղել «Վրաստան» թերթի խմբագրությանը: Բարեկամնե՛ր, մեծ է ձեր ներդրումը Վրաստանում ազգամիջյան հարաբերությունների կարգավորման, հանդուրժողականության մթնոլորտի հաստատման, Վրաստանի ու Հայաստանի, վրաց ու հայ ժողովուրդների միջեւ իրական բարեկամության խորացման գործում: Ուստիեւ, ձեզ մաղթում եմ նորանոր հաջողություններ, ընթերցողների բանակի եւ թերթի տպաքանակի ավելացում: Երջանկություն ձեզ ու ձեր ընտանիքներին:

***ՊԱԱՏԱ ԽԻՋԱՆԻՇՎԻԼԻ***
*Քվեմո Քարթլիի պետական լիազոր-նահանգապետ*

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տեղ բնակվող հայազգի յուրաքանչյուր քաղաքացի ունենա իր պատշաճ տեղը վրացական հասարակության մեջ եւ, միաժամանակ, հավատարիմ լինի իր ազգային արմատներին, որպեսզի արժանվույն դերակատարություն ունենա հայ ու վրաց ժողովուրդների, ինչպես սովորաբար շեշտում են, եւ այս դեպքում ես էլ չեմ կարող չկրկնել, դարավոր եղբայրական բարեկամության ամրապնդման գործում:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ Նոր տարվա կապակցությամբ, ցանկանում բարեկեցություն, անհոգ ու երջանիկ կյանք, ջերմություն ու ներդաշնակություն՝ ձեր ընտանիքներում:

Շնորհավորում եմ նաեւ «Վրաստան»-ի խմբագրակազմին: Նշանակալից է ձեր դերը ընթերցողներին Վրաստանում կատարվող քաղաքական-հասարակական եւ համայնքային կյանքի կարեւորագույն երեւույթների, նոր օրենքների եւ գործող օրենքներում կատարվող փոփոխությունների լուսաբանման գործում, պատմում եք այն բարեփոխումների մասին, որոնք տեղի են ունենում երկրի կրթության, առողջապահության, գյուղատնտեսության, էկոնոմիկայի եւ մյուս ոլորտներում: Միաժամանակ, զգալի ավանդ եք ներդնում Վրաստանում հայապահպանության, հայ-վրացական բարեկամության եւ փոխըմբռնման գործում: Դուք հարթակ եք ստեղծում մեր խումբը հայ համայքին հասցնելու համար, ինչպես նաեւ կատարում եք հայ ազգաբնակչությանը մեր հայրենիքի նորություններին մշտապես իրազեկ պահելու շնորհակալ գործը: Մաղթում եմ ձեզ առաջընթաց՝ ստեղծագործական աշխատանքում, բարօրություն եւ արգասաբեր գործունեություն:

***ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ***
*Վրաստանում Հայաստանի արտակարգ եվ լիազոր դեսպան*

## ՎԱՌՎԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԱԾԱՌԻ ԼՈՒՅՍԵՐԸ

Դեկտեմբերի 25-ին Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան վառեց Ռուսթավելու պողոտայում տեղադրված ամանորյա գլխավոր տոնածառի լույսերը:

Նոր՝ 2015 թվականի տոնակատարության շրջանակներում, մայրաքաղաքի բնակիչները եւ հյուրերը կկարողանան դիտել Ձմեռ պապերի հեծանվամարաթոնը, մարմնամարզիկների, ձեռնածուների ելույթը, Շարժման թատրոնի ներկայացումները եւ սահել չմուշկներով:

Միջոցառումները կշարունակվեն մինչեւ Ծննդյան տոները:

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՔԱՋԱՏԵՂՅԱԿ ԵՆՔ, ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐԻՆԸ ԱՐՎՈՒՄ Է ԴՐԱՆՑ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դարանի, կառավարության եւ ոչ կառավարական հատվածի ներկայացուցիչները:

«Չի կարելի բարեփոխումներն իրականացնել արագացված կարգով»,- ասաց վարչապետը եւ հավելեց, որ Վրաստանի նոր իշխանություններն ամեն ինչ արել են, որպեսզի բարեփոխումների նոր փուլ սկսվի:

Հանրագումարային ասուլիսում վարչապետը նշեց, որ շատ ավելի էական է համարում խոսել ոչ թե ձեռքբերումների, այլ առկա հիմնախնդիրների մասին: «Մենք բոլորս միասին շատ անելիքներ ունենք եւ առաջին հերթին պետք է սկսենք մեզանից: Հիմնախնդիրներին քաջատեղյակ ենք, եւ հնարավորինը արվում է դրանց կարգավորման համար»,- հայտարարեց վարչապետը:

Մամլո ասուլիսում Իրակլի Ղարիբաշվիլին անդրադարձավ նաեւ ազգային տարադրամի տատանումների, բյուջեի կատարման, էկոնոմիկայի, բռնազավթված տարածքների, Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցերին:

## ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ՝ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ

### ՀԱՏԿԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ԿՈՒՂՂՎԻ ՆԱԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆԸ



Դեկտեմբերի 24-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանի հիմնական կրոնական ուղղությունների՝ Հայ Առաքելական եւ Կաթոլիկ եկեղեցիների, հրեական եւ մուսուլմանական համայնքների ներկայացուցիչների հետ:

Հանդիպման մասնակիցներին վարչապետը տեղեկացրեց, որ, կառավարության որոշման համաձայն, Վրաստանում վերոհիշյալ կրոնական միավորումներին ֆինանսական փոխհատուցում է տրամադրվել «խորհրդային ամբողջատիրության շրջանում հասցված» բարոյանյութական վնասի համար:

Հանդիպմանը Իրակլի Ղարիբաշվիլին հետաքրքրվեց կրոնական միավորումների ֆինանսավորման հետ կապված ընթացակարգերով եւ կրոնի հարցերի պետական գործակալության ղեկավար Զազա Վաշաղմաձեին խնդրեց ներկայացնել հակիրճ հաշվետվություն:

Գործակալության ղեկավարի խոսքով, Վրաստանի պետությունը պայմանագրեր է ձեւակերպել բոլոր չորս կրոնական միավորումների հետ, եւ գումարը արդեն գրանցված է նրանց հաշիվներում: Փոխհատուցման կարգով տրվող գումարները հիմնականում նախատեսված են մշակութային, վերականգնողական, կրոնական գործունեության համար:

## ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵՑ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ

### ՀԱՍՏԱՏՎԵՑ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

***Դեկտեմբերի 22-ին Վրաստանի կառավարությունը հաստատեց Ասոցիացման խորհրդի կազմը:***



Եվրամիության եւ Վրաստանի միջեւ Ասոցիացման համաձայնագրի շրջանակներում, վրացական կողմից Ասոցիացման խորհուրդը կգլխավորի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, անհրաժեշտության դեպքում՝ արտաքին գործերի նախարար Թամար Բերուչաշվիլին:

Խորհրդի կազմում ընդգրկվել են նաեւ արդարադատության, պաշտպանության, մշակույթի, ներքին գործերի, էկոնոմիկայի, ֆինանսների, կրթության, բնապահպանության, էներգետիկայի, առողջապահության, փախստականների հարցերով տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների, քրեա-կատարողական եւ պրոբացիայի, գյուղատնտեսության, սպորտի նախարարները, ինչպես նաեւ հաշտեցման ու սփյուռքի հարցերով, եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցերով պետնախարարները:

Եվրամիությանը ինտեգրման հարցերով հանձնաժողովը համաձայնեցրեց 2015 թվականի ծրագիրը, որը մոտ ժամանակներս կներկայացվի կառավարության հաստատմանը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ

***Վրաստանի բռնազավթված տարածքներում՝ Աբխազիայում եւ Ցխինվալիի երկրամասում, ստեղծված իրավիճակի քննարկման նպատակով, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին անցկացրեց մի շարք հանդիպումներ:***

Մասնավորապես, նախագահը հանդիպում ունեցավ ոչ խորհրդարանական ընդդիմության՝ «Նոր աջեր», «Միացյալ ժողովրդավարական շարժում», «Քարթուլի դասի», «Ձախ ալյանս», «Վրաստանի ուղին», «Ազգային ժողովրդավարական», «Քաղաքացիական ալյանս» եւ «Եվրոպական ժողովրդավարներ» կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

Նախագահի կողմից նախօրոք հայտարարված խորհրդատվությունների անցկացման ծրագրի շրջանակներում, Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ նաեւ խորհրդարանական ընդդիմության «Ազատ ժողովրդավարների» ու «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչների հետ:

Բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակը, երկրի ղեկավարը քննարկեց նաեւ Վրաստանի ոչ կառավարական հատվածի ներկայացուցիչների հետ:

## ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ



Սովորաբար ամեն ինչի սկիզբը հետաքրքիր է, իսկ գեղեցիկ սկիզբը՝ է՛լ ավելի հետաքրքիր: Ժամանակը միշտ հին է, բայց եւ միշտ նոր է: Նոր է ամեն ակնթարթ ու վայրկյան, ամեն րոպե ու օր, ամեն ամիս ու տարի: Մի քանի օր հետո երկիր մոլորակը կհանդիպի Նոր տարվան: Մարդկությունը հրաժեշտ կտա 2014-ին ու կթեւակոխի Նոր տարեթիվ՝ 2015-ը: Նորի նախաշեմին ինքնաբերաբար խոսում են հնի մասին, անցած օրերի, հաջողությունների, ավա՜ղ, նաեւ անհաջողությունների մասին, ուրախությունների, ավա՜ղ, նաեւ տխրությունների մասին... Եվ հրաժեշտ են տալիս հնին՝ միշտ նորից ակնկալելով լավը, գեղեցիկը, բարին, հաջողը: Վատ տարի չէր 2014-ը, երեւի ավելի շուտ լավն էր. եթե ինձ հարցնեն՝ այսպես կպատասխանեմ ու իմ հայրենակիցներին ու, ընդհանրապես, համայն մարդկությանը կմաղթեմ, որ հաջորդ տարին ավելի շատ մեզ ուրախացնի ու լավ գործերի աղբյուր, ակ դառնա: Եվ լինի այնպես պարզ ու մաքուր, ինչպես լեռնային աղբյուրից բխող ջուրը: Միշտ լինենք իրար կարեկից, իրար սատար, օգնենք նեղյալին, դրանից չհոգնենք երբեք:

Օգտվելով «Վրաստան» թերթում շնորհավորանք հղելու ինձ տրված առիթից՝ ես ուզում եմ համերկրացիներիս շնորհավորել նաեւ ինձ վերապահված մեկ այլ իրավունքով: Դա, այս օրերին ԱՄՆ հանգստանալու մեկնած, հայերի համաշխարհային կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանի շնորհավորանքի ուղերձն է համերկրացիներիս՝ բարի Նոր տարի եմ մաղթում բոլորիդ, սիրելի վիրահայեր: Թող Աստված լույսի ու բարիքի դռները միշտ բաց պահի ձեր առաջ եւ ձեր շնորհիվ է՛լ ավելի ամրապնդվեն հայ-վրաց բարեկամության վաղնջական կապերը:

Ողջ լինենք, սիրելի բարեկամներ: Շնորհավոր Նոր տարի: Ամենայն բարիք:

***ՌԱՖԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ***
*Համաշխարհային հայկական կոնգրեսի վարչության անդամ, գործարար*

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մատեղ ջանքերով ենք կարգավորելու դրանք: Իսկ ջանքերի համատեղման, ընդհանուր նպատակներին հասնելու համար, մեզ անհրաժեշտ է միմյանց նկատմամբ դրսեւորվել հանդուրժողականություն, փոխըմբռնում, համբերություն, փոխադարձ հարգանք: Միայն այդպես մենք կկարողանանք ապրել ու բարգավաճել:

Սիրելի՛ հայրենակիցներ, տա Աստված, որ 2015-ը այդ առումով լինի բացառիկ, առանձնահատուկ:

Առանձնակի կցանկայի դիմել «Վրաստանի» աշխատակիցներին: 95-ամյա ձեր պարբերականը տասնամյակներ շարունակ եղել է վրաց պետականության շինարարների առաջին շարքերում, նշանակալի ավանդ է ներդրել բազմազգ Վրաստանի զարգացման գործում, հուսալիորեն կամրջել վրաց-հայ ժողովուրդների բազմադարյան բարեկամությունը: Իր պատմության ընթացքում խմբագրակազմի մի քանի սերունդ է փոխվել, սակայն անփոփոխ է մնացել գլխավոր դրույթը՝ հավատարմությունը մեր երկու ժողովուրդների միջեւ իրոք բարիդրացիական, եղբայրական հարաբերություններին: Շնորհավոր ձեր Նոր տարին, բարեկամնե՛ր, նորանոր ստեղծագործական հաջողություններ, երջանկություն, առողջություն ձեզ ու ձեր ընտանիքներին:

***ՊԱԱՏԱ ԶԱՔԱՐԵԻՇՎԻԼԻ***
*Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար*

## ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ



Թանկագի՛ն բարեկամներ.

Շնորհավորում եմ ձեզ 2015 թվականի՝ Նոր տարվա ու Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնի առթիվ: Երջանկություն, բարեկեցություն ձեզ ու ձեր ընտանիքներին:

Առանձնակի կցանկանայի դիմել իմ հանրազատ ախալքալաքցիներին: Սիրելի՛ բարեկամներ, միասին ճանապարհեցինք ոչ այնքան դյուրին, հիմնախնդիրներով հագեցված 2014-ը: Համատեղ ջանքերով առանձին հիմնախնդիրները կարողացանք կարգավորել, թեպետ դեռ անելիքները շատ են: Զինվենք համբերությամբ, լինենք լավատեսներ, հավատանք մեր ուժերին ու հնարավորություններին՝ առաջընթացի ապահովման, հաջողություններին հասնելու ու մեր կյանքը ավելի բարեկեցիկ դարձնելու համար:

Համոզված եմ, որ 2015-ը կլինի շատ ավելի լավը, քան 2014-ն էր: Եկեք միասին այդ համոզվածությունը վերածենք իրականության: Եվ հենց այս լավատեսությամբ էլ իմ անկեղծ մաղթանքներն եմ հղում ձեզ, թանկագի՛ն բարեկամներ:

***ՀԱՄԼԵՏ ՄՈՎՍԻՍՅԱՆ***
*Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ*

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վորվել: Մենք վերջապես կարողացանք մարմնավորել մեր մեծ նախնիների նպատակը՝ վավերացրինք Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագիրը, մեր արժանվույն տեղը գրավեցինք եվրոպական ազգերի շարքում: Սակայն, քննադատական մոտեցման դեպքում նաեւ կտեսնենք, որ անչափ շատ են չկարգավորված հիմնախնդիրները, լուրջ բարդություններ կան զբաղվածության, սոցիալական եւ մյուս ոլորտներում: Հիմնախնդիրներ կան, եւ մենք միասին ենք դրանք լուծելու, ջանքերի, կամքի ու ցանկության համատեղությամբ: Չէ՞որ Վրաստանը մեր ընդհանուր հայրենիքն է, եւ նրա բարեկեցությունը մեզանից յուրաքանչյուրի բարեկեցությունն է:

Պայծառ ապագայի հույսով ու հավատով շնորհավորում եմ Նոր տարվա ու Սուրբ Ծննդի առթիվ:

***ԴԱՎԻԹ ՍԱԳԱՆԵԼԻՁԵ***
*Վրաստանի խորհրդարանի մեծամասնության լիդեր*



Թրիալեթյան լեռնաշխարհը բնօրրանն է իմ: Բնօրրանն է եւ ձեր, սիրելի՛ ծալկացիներ: Ես սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ դուք տքնեցիք ամբողջ տարին. մեկդ այստեղ՝ Վրաստան երկրում, մյուսդ՝ արտերկրում... Սակայն, մեկն էր բոլորիդ նպատակը՝ շեն պահել ձեր օջախները, ձեր շեները, ձեր երկիրը, ձեր հողն ու ջուրը: Եվ անցնող 2014-ում էլ, ինչպես նախորդ բոլոր տարիներին, դուք ուժ ու եռանդ, սիրտ ու հոգի ներդրեցիք հանուն այն բանի, որ ապրեք բարեկեցիկ կյանքով, արդար կյանքով ու երջանիկ լինեն ձեր զավակներն ու մերձավորները: Ավարտվում է 2014 թվականը, եւ սկսվում է նոր՝ 2015 թվականը: Ես մաղթում եմ ձեզ դարձյալ աննկուն կամք, մաղթում եմ է՛լ ավելի բազմապատկել այն ուժը, որը ձեզ երբեմնի խարխուլ խրճիթներից բերել-հասցրել է մինչեւ գեղեցիկ բարեկեցիկ առանձնատներ: Դուք, սիրելի ծալկացիներ, ունեք ձեզ Աստծուց շնորհված այդ ներուժը: Ես հպարտ եմ ձեզանով, ձեր սիրով դեպի մերձավորն ու օտարն անգամ: Մաղթում եմ, որ 2015-ը լինի ձեզ համար սիրո, գեղեցկության եւ նվաճումների տարի: Շնորհավո՞ր Նոր տարի: Բարի Նոր տարի:

***ԳՈՉԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ***
*Ծալկայի շրջանի մունիցիպալիտետի սակրեբուլոյի փոխնախագահ*

## 37 ՏԱՐԻ՝ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ



*Դեկտեմբերի 25-ին լրացավ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Սրբազնագույն եւ Երանաշնորհ Իլիա Երկրորդի գահակալության 37-ամյակը:*

Տարեդարձի առթիվ, Վրաց Ուղղափառ բոլոր եկեղեցիներում անցկացվեցին տոնական միջոցառումներ: Այդ օրը Սրբազնագույնն ու Երանաշնորհը հանդիսավոր պատարագ մատուցեց Սվետիցխովելիի տաճարում: Այնտեղ, որտեղ 37 տարի առաջ՝ 1977 թվականի դեկտեմբերի 25-ին օծվեց որպես Վրաց Ուղղափառ եկեղեցու առաջնորդ:

Վրաստանի հոգեւոր առաջնորդին գահակալության 37-ամյակի առթիվ շնորհավորեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

*Գերմանիայի կառավարությունը որոշում է ընդունել վրաց-գերմանական համագործակցության շրջանակներում Վրաստանին հատկացնել 20 միլիոն եվրոյի արտոնյալ վարկ: Վարկն ուղղվելու է կլիմայի ենթակառույցների համար անվտանգության ծրագրի նոր նախագծի ֆինանսավորմանը:*

Այդ մասին ֆինանսների նախարար Նոդար Խադուրուն պաշտոնապես տեղեկացրել է Վրաստանում Գերմանիայի դեսպանության տնտեսական համագործակցության բաժնի ղեկավար Կատարինա Դեկորնը:

Այսօրվա դրությամբ, Գերմանիայի կողմից Վրաստանին հատկացված ֆինանսական օգնությունը կազմում է 650 միլիոն եվրո:

Արժույթի միջազգային հիմնադրամը Վրաստանին հատկացնում է 58,1 միլիոն դոլարի ֆինանսական նոր տրանշ: Հիմնադրամը գումարը հատկացնում է Վրաստանին ցուցաբերվող տնտեսական օգնության շրջանակներում: Նշենք, որ այդ նախագծի շրջանակներում, Վրաստանն արդեն ստացել 116,3 միլիոն դոլար:

Արեւելյան Եվրոպայի վեց երկրներին ֆինանսական օգնություն ցուցաբերելու նպատակով, 2015-2017 թվականների համար փոխանցվելու է 33,8 միլիոն եվրո:

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ



*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդես եկավ դատախազության բարեփոխման նախաձեռնությամբ եւ արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանուն հանձնարարեց ստեղծել դատախազության աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված ինստիտուցիոնալ բարեփոխումների, մշակման աշխատանքային խումբ:*

Վարչապետը ոչ կառավարական կազմակերպություններին կոչ արեց ներգրավել խմբի աշխատանքին եւ վավերացնել իրենց դիրքորոշումը:

«Վարչապետի հանձնարարության համաձայն, դատախազության բարեփոխման նպատակով ստեղծվել է միջգերատեսչական խորհուրդ, որը ղեկավարում է արդարադատության նախարարը: Խորհրդի կազմում ընդգրկվել են դատախազության ՆԳ նախարարության, խորհրդարանի իրավաբանական կոմիտեի, քրեա-կատարողական նախարարության, միջազգային կազմակերպությունների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաեւ կառավարության խորհրդարանական քարտուղարը»,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

Նրա խոսքերով, աշխատանքային խմբի գլխավոր խնդիրն է հստակեցնել դատախազության բարեփոխումից հետո դրա ենթակայության հարցը:

## ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ 15 ՏՈԿՈՍՈՎ

*Վրաստանի ներքին գործերի նախարարությունը հրապարակել է 2014 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների ցուցանիշները:*

Նախարարության տվյալներով, անցած ժամանակահատվածում վավերացվել է 24368 իրավախախտում, որից 16104-ը բացահայտվել են: Բացահայտման ցուցանիշը կազմել է 66,09 տոկոս: Նախորդ տարվա համեմատությամբ, իրավախախտումների թիվը նվազել է 15 տոկոսով: Նույն հաղորդագրության մեջ նշվում է, որ Վրաստանում ամենատարածված իրավախախտումները գողությունը եւ թմրանյութերի ու հրազենի հետ կապված հանցագործություններն են:

Այսպես, 2014 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին վավերացված 24368 հանցագործություններից 8,547-ը գողություն է, 4,807-ը կապված է թմրանյութերի, իսկ 1007-ը՝ հրազենի ապօրինի ձեռքբերման օգտագործման հետ:

## ՏՈՒԳԱՆՔ՝ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՂՏՈՏՄԱՆ ՀԱՄԱՐ

*2015 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ են մտնում փողոցների աղտոտման համար պատժամիջոցները:*

Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի շրջակա միջավայրի պաշտպանության կոմիտեի փոխնախագահ Գուգուլի Մաղրաձեն, նոր օրենքի համաձայն, փողոցի աղտոտման համար նախատեսված են 80, 100 եւ 150 լարիի տուգանքներ:

«Այս օրենքը մեծ նշանակություն ունի: Օրենքում ամեն ինչ մանրամասն նշված է, այնպես որ, տարակարծություն չի առաջանա: Օրինակ՝ փողոցում 2 կիլոգրամի չափով կենցաղային մնացորդ թափելու համար, տուգանքը կկազմի 80 լարի: Նույն գործողության կատարումը բնակելի մասնաշենքերի մոտ՝ 100 լարի, ավտոտրանսպորտային միջոցներից աղբի թափումը՝ կտուգանվի 150 լարիով»,- հայտարարեց Գուգուլի Մաղրաձեն:

Նրա խոսքերով, տուգանքները դուրս գրելու իրավունքը վերապահված է ներքին գործերի նախարարությանը, շրջակա միջավայրի վերահսկողության ծառայությանը եւ տեղական ինքնակառավարման մարմինների վերահսկման ծառայություններին:

## ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ



Սիրելի՛ բարեկամներ.

Շնորհավորում եմ ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծննդի առթիվ: Երջանկություն, հաջողություն, բարգավաճում ձեզ եւ ձեր ընտանիքներին: Թող 2015-ը ձեզանից յուրաքանչյուրի համար դառնա նպատակների իրականացման, առաջընթացի տարի:

Այս տոնական օրը չէի ցանկանա ձեզ ծանրաբեռնել անցած տարվա ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվությամբ ու առաջիկա ծրագրերի ներկայացմամբ: 2014-ը նշանավորվեց սոցիալական եւ ենթակառուցային առանձին նախագծերի իրականացմամբ, թեպետ բոլորը հարցերը չէ, որ լուծվեցին, բոլոր հիմնախնդիրները չէ, որ կարգավորվեցին: Այնպես որ, առաջիկայում անելիքները շատ են: Մեզ հուզող հարցերը մեզանից բացի ոչ մեկը չի լուծելու, հետեւաբար զինվենք համբերությամբ, լավատեսությամբ, համատեղ ձեռնամուխ լինենք մեզ հուզող հարցերի լուծմանը:

Թանկագի՛ն նինոծմինդացիներ, այսօր՝ Նոր տարվա մեկնարկին, ձեզանից յուրաքանչյուրին մաղթում եմ առողջություն, բարիք ու բարգավաճում: Թանկագիններս, համատեղենք մեր ջանքերը, քանի որ դա հաջողության ապահովման միակ երաշխիքն է:

Շնորհավո՞ր Նոր տարի, բարեկամներ:

***ՍՄԲԱՏ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ***
*Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ*

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ընդամենը մի քանի օր եւս, եւ մեր դեմ կկանգնի 2015-ը: Կգա զարդարուն տոնածառերով, ուրախության սեղաններով, առողջության ու հաջողությունների բյուր մաղթանքներով մենք կբաժանվենք հնից ու հույսի աչքերով կնայենք նորին՝ 2015-ին: Իմ շրջանն էլ՝ Ջավախքը, ուր ծնվել ու աչք եմ բացել, որին, կարծում եմ, հնարավորինը ծառայում եմ երկրի բարձրագույն մարմնում՝ խորհրդարանում, աշխատանքի հանդեպ իր սիրով, իր ստեղծագործ ուժով ու ստեղծագործ մտքով եւ իր լեռների պես ամուր, հողի հետ կռիվ տվող ձեռքերով ու բազուկներով, պարզ ճակատով կկանգնի Նոր տարվա դեմ ու Աստծուց կխնդրի այդ տարում միշտ բարի ու լավ օրեր պարգեւել իրեն:

Սիրելի ջավախքցիներ, հարգարժան նինոծմինդացիներ, ջերմորեն շնորհավորում եմ ձեր Նոր տարին, ուժ եմ մաղթում ձեզ, տոկունություն, համբերություն, միաբանություն եւ սեր: Միասնական լինենք ու միասնաբար ծառայենք մեր երկու հարազատ երկրներին՝ Վրաստանին ու Հայաստանին:

***ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆ***
*Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր*

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյան ու հաջողությունների:

Սամցխե-Ջավախեթիում մենք ավանդական կարգով մեծ հույսերով եւ տենչանքներով ենք դիմավորում եկող տարին: Ու թեեւ անցած տարում Վրաստանի կառավարության, շրջանային վարչության ու մունիցիպալիտետների միասնական ջանքերով անհամար հիմնախնդիրներ կագավորվեցին, այդուամենայնիվ, մենք համոզված ենք, որ գալիք տարին եւս հարուստ կլինի առավել հետաքրքիր ու նշանակալից նորույթներով: Մեր գերնպատակն է ծառայել ժողովրդին եւ հոգալ յուրաքանչյուր քաղաքացու բարօրության մասին:

Թող Նոր՝ 2015 թվականը, մեր շրջանի բազմաէթնիկ բնակչությանն ու համայն Վրաստանին առաջընթաց ու հաղթանակներ բերի:

Շնորհավորում ենք նաեւ «Վրաստան» թերթի յուրաքանչյուր աշխատակցի Նոր տարին: Մենք հավատում ենք, որ դուք ձեր գործունեությամբ կարեւոր ավանդ եք ներդնում մեր շրջանի հասարակության մեջ բարեկամական ու բարիդրացիական հարաբերությունների խորացման եւ մասնավորապես երկրի կառուցման գործում:

***ԱԿԱԿԻ ՄԱՃՈՒՏԱՁԵ՝***
*Սամցխե-Ջավախեթիի պետական լիազոր-նահանգապետ*

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ՍՏՈՐԱԳՐՎԵՑ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ»-Ի ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կան սահմանի Բագրատաշեն-Սադախլո անցման կետի տարածքում, Դեբեդ գետի վրա, նոր կամրջի կառուցման վերաբերյալ» համաձայնագիրը: Փաստաթուղթն ստորագրեցին Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարյանը եւ Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին:

2014թ. դեկտեմբերի 11-12-ը ՀՀ վարչապետի Վրաստան կատարած պաշտոնական այցի շրջանակում, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը եւ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նախաստորագրել էին վերոնշյալ համաձայնագիրը ու նաեւ ստորագրել էին արձանագրություն՝ պայմանավորվածություն ձեռք բերելով առ այն, որ մինչեւ 2015թ. համաձայնագիրը կստորագրվի, եւ Հայաստանի ու Վրաստանի միջեւ կառուցվելիք նոր կամուրջը կանվանվի «Բարեկամության կամուրջ»:

Համաձայնագրի ստորագրման արարողությանը հաջորդեց Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի հանդիպումը Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Կվիրիկաշվիլու հետ, ով նաեւ առեւտրա-տնտեսական հարցերով հայ-վրացական աշխատանքային խմբի համանախագահն է: Հայաստանի վարչապետը գոհունակություն հայտնեց երկու երկրների միջեւ հարաբերությունների զարգացման ընթացքից, կարեւորեց Վրաստանի հետ երկկողմ կապերի շարունակական ակտիվացումն ու սերտացումը: Երկուստեք հաջողված եւ արդյունավետ գնահատվեցին Հայաստանի վարչապետի Վրաստան կատարած պաշտոնական այցը, որը հնարավորություն տվեց կյանքի կոչել ձեռք բերված պայմանավորվածությունները եւ նախանշեց համագործակցության զարգացման նոր ուղղությունները:



## ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ. «ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՌԵԺԻՄԸ ՁԵՌՆԱՏՈՒ Է Ե՛Վ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, Ե՛Վ ՎՐԱՍՏԱՆԻՆ»



***Հայաստանի եւ Վրաստանի համար ձեռնտու չէ փոխել ազատ առեւտրի ռեժիմը, հետեւաբար, երկու պետությունները կանեն հնարավորը պահպանելու համար առեւտրի ոլորտում այդ իրավիճակը:***

Այս մասին, Երեւանում անցկացվող հայ-վրացական համատեղ աշխատանքային խմբի երկրորդ նիստից հետո, հայտարարեց Հայաստանի էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանը: Նա ընդգծեց, որ Վրաստանի հետ առեւտրաշրջանառության ծավալը տարեցտարի ավելանում է:

Հայաստանի էկոնոմիկայի նախարարը նշեց, որ աշխատանքային խորհրդակցության հիմնական իմաստը եւ ուղղությունն այն է, որ կողմերը գտնեն համագործակցության նոր ուղիներ: «Հիմնականում պահպանելու ենք ավանդական ուղղությունները, սակայն դրանց կավելանան նորերը: Վրաստանը Եվրամիության հետ արդեն ունի ազատ առեւտրի ռեժիմ, միեւնույն ժամանակ Հայաստանը դարձել է Եվրասիական տնտեսական միության անդամ, այսինքն՝ երկու կողմերը կարող են օգտվել այդ հանարվորություններից»,- նկատեց Կարեն Ճշմարիտյանը:

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՏԱՐԲԵՐ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎԵԼԸ ՉԻ ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ»

***Տարբեր միություններում գտնվելը չի խոչընդոտի Վրաստանի եւ Հայաստանի համագործակցությանը առեւտրային ու տնտեսական ոլորտներում:***



Այս մասին աշխատանքային խմբի երկրորդ նիստից հետո հայտարարեց Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին: Նրա խոսքով, Վրաստանն անելու է ամեն ինչ, որ Եվրամիության հետ համագործակցության ամրապնդումը համատեղի Հայաստանի հետ համագործակցությանը: «Մենք ունենք բավականին ժամանակ, որ քննարկենք բոլոր տեխնիկական հարցերը՝ կապված դրա հետ: Անելու ենք ամեն ինչ, որ Վրաստանն ու Հայաստանը մնան ակտիվ առեւտրատնտեսական կապերի մեջ: Հայաստանը մեզ համար կարեւորագույն առեւտրային գործընկերներից է: Այն մտնում է Վրաստանի առեւտրային գործընկերների տասնյակի մեջ, եւ մենք անելու ենք ամեն ինչ, որ այս հարաբերությունները զարգանան»,- հայտարարեց Կվիրիկաշվիլին:

Նա նկատեց, որ պետությունները մի քանի տարի ժամանակ ունեն՝ որպես անցումային շրջան, եւ փորձելու են պահպանել այն մաքսային դրույքաչափերը, որ գործել են մինչ այժմ: «Կանենք հնարավորինս, որ մնանք այն մաքսային դրույքաչափերին, որոնք կան մեր երկրների միջեւ: Մենք ունենք հնարավորություն՝ քննարկումներ սկսելու առեւտրի նոր փոփոխությունները քննարկելու համար»,- հայտնեց նա:

ՀԻՇԵՑԵՔ ԱՅՍ ԱՆՈՒՆԸ

# ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ՝ ՏԱՐԵՎԵՐՋԻ «ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»



***Ժամը 23:55 էր, երբ ֆեյսբուքյան իմ զրուցակցին՝ ընդամենը 10-րդ դասարանի աշակերտ Աննա Հովհաննիսյանին, բարի գիշեր մաղթեցի՝ գիտակցելով, որ վաղն առավոտյան դպրոց է գնալու.***

***- Դե՛, գնա քնիր, Աննա ջան, շատ ուշ է:***

- Չէ, ի՞նչ եք ասում,- պատասխանեց նա,- ես դեռ այնքա՜ն գործեր ունեմ: Քննաշրջանն է սկսվել:

***- Դպրոցու՞մ,- ստիպված շարունակեցի զրույցս:***

- Ո՛չ, Իվ. Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանում (ԹՊՀ):

***- Այսի՞նքն,- զարմացա ես:***

- Դե, ես նաեւ ԹՊՀ ճշգրիտ ու բնագիտական գիտությունների ֆակուլտետի մաթեմատիկայի դեպարտամենտի եւ ԹՊՀ Մանկական համալսարանի կրթագիտական դպրոցի 4-րդ խմբի 12-րդ դասարանի սանն եմ ու նաեւ ղեկավարը:

*Նորից զարմացա, բայց շա՜տ հաճելիորեն: Ու նաեւ արտասովոր մի հպարտություն ապրեցի, որ Աննան հենց մայրաքաղաքի թիվ 104 հայկական դպրոցի սան է: Դե', թող զարմանան հիմա նրանք, ովքեր խոսում են մեր դպրոցների թույլ լինելու մասին, եւ կամ նրանք, ովքեր պնդում են, որ Վրաստանում ինտեգրացիայի առաջին խոչընդոտը ոչ վրացական ազգանունն է: Ահա խնդրեմ, ի դեմս Աննայի վառ ապացույցն այն բանի, որ երիտասարդն ինքն էլ պիտի ձգտող ու շնորհալի լինի:*

*Պարզեցի նաեւ, որ ծանոթ-բարեկամը չէ կամ ընտանիքի նյութական հնարավորությունը, որ շարժիչ ուժ են դառնում Աննայի համար: Սովորական ընտանիքի զավակ է. մայրը՝ տնային տնտեսուհի է, հայրը՝ կոշկակար: Ծնվել է Թբիլիսիում, 1-ից 3-րդ դասարանները սովորել ռուսական դպրոցում, այնուհետեւ ծնողները տեղափոխել են հայկական դպրոց, ըստ որում՝ նաեւ իր ցանկությամբ: Ասեմ նաեւ, որ կրթական նրա արեալը միայն դպրոցը չէ: Ինչպես նշեցի, Աննան Մանկական համալսարանի սան է (Գ.Բ. գործում է 2012 թվականից, ընդգրկում 7-12-րդ դասարանի աշակերտների, պատրաստում նրանց բարձրագույն մաթեմատիկայում), բացի այդ, հաճախում է իրավաբանական, տնտեսագիտական կուրսերի: Նորից զարմացեք. լրջորեն զբաղվում է նաեւ սպորտով: 2010 թվականին, Վրաստանի ձյուդոյի առաջնությունում, կադետ աղջիկների շրջանում երրորդ տեղն է նվաճել, ինչպես նաեւ պրոֆեսիոնալ լողորդի կոչում է ստացել լողի ասպարեզում:*

***- Աննա, իսկ ինչպե՞ս ես իմանում այս ամենի մասին, հետո մասնակցում: Այս ամենն անվճա՞ր է,- հարցնում եմ նրան:***

- Այո, անվճար է: Դասընթացների եւ ուսումնական այլ ծրագրերի մասին համացանցից եմ տեղեկանում ու անմիջապես գնում եմ մասնակցելու: Քննություն կամ հարցազրույց են նշանակում, հաղթահարում եմ ու սկսում սովորել: Իսկ օլիմպիադաների՝ տնօրինությունն է ուղարկում, հետամուտ է լինում նաեւ դասղեկս՝ Ալլա Գրիգորյանը: Ընդհանրապես, օրս սկսվում է դպրոցով, ավարտվում՝ համալսարանով կամ մարզադահլիճով: Շաբաթ ու կիրակի օրերին եւս սովորում եմ: Օրինակ, անցած կիրակիներին բարեհաջող հանձնեցի բարձրագույն մաթեմատիկայի եւ իրավագիտության քննությունները:

***- Չես հոգնու՞մ...***

- Շատ,- պատասխանում է ու շարունակում: Բայց գիտեմ, որ ինչ-որ բանի հասնելու համար պետք է շա՜տ աշխատել, սովորել, մտավոր ու սեփական կարողություններով:

*Երեւի հենց այդ գիտակցումն էլ օգնեց. Աննան հաղթեց միջազգային մաթեմատիկայի օլիմպիադայում, որն անցկացվեց այս տարվա սեպտեմբերին, Թուրքիայի սեւծովյան Օրդու քաղաքի մոտակայքում գտնվող Կորղան շրջանում, ուր, ի դեպ, հանդես եկավ որպես աշակերտական խմբի ղեկավար: Ավելացնենք նաեւ, որ Աննան հաղթեց նաեւ Բակուրիանիում, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության հովանավորությամբ անցկացվող Վրաց լեզվի օլիմպիադայում („King's"): Նա հաղթող ճանաչվեց նաեւ «Քայլ առ քայլ դեպի գիտելիք», «Պյութագորասի առաջնություն» «Վաղվա հույս» մրցաշարերում:*

***- Աննա, իսկ գիտե՞ս, թե ո՞րն է հաջողությանդ գրավականը:***

- Աշխատելու անսպառ ցանկությունն ու պետական՝ վրաց լեզվի լավ իմացությունը: Ընտանիքս հայախոս է: Վրացերեն ես սովորում եմ միջավայրում, դպրոցում, համացանցում, տարբեր դասընթացների ու պարապմունքների մասնակից եմ դառնում: Լեզվական որեւէ խոչընդոտ չունեմ, վրացի շատ լավ ընկերներ եմ ձեռք բերել: Ես հպարտ եմ, որ էթնիկ հայ եմ, որ Վրաստանում եմ ապրում եւ կարողանում իրագործել այն, ինչ երազում եմ:

***- Իսկ ի՞նչի մասին ես առավել երազում... Ահա մոտենում է 2015-ը:***

- Երազում եմ, որ ամենուր՝ տանը, դրսում, երկրում խաղաղություն լինի, որ իմ բոլոր մերձավորները՝ տանեցիները, ընկերներս, լինեն առողջ ու հաջողակ: Միշտ կարողանանք սովորել, էլ ավելին իմանալ, գիտելիք կուտակել:

*Ընթերցողի հետ պետք է անկեղծ լինեմ՝ ասելով, որ որեւէ խոսք կամ նկարագիր այս խոստումնալից աղջնակի կենսագրականում չեմ ավելացրել, դեռ մի բան էլ կրճատել եմ, չնշելով այլեւայլ կոնֆերանսներին կամ կրթական ծրագրերին իր ակտիվ ու փայլուն մասնակցությունը: Կարծում եմ, այսքանն էլ բավական է Ամանորի նախաշեմին հասկանալու համար, որ ամեն ինչ մեր իսկ սեփական ձեռքերում է: Ու եթե դա հաջողվում է անել ընդամենը 10-րդ դասարանի աշակերտին, ապա ի՞նչ ասեմ... Պարզապես ցանկանում եմ, որ 2015-ի ծրագրերն ու անելիքները կազմելիս, այս նյութն, իրոք, մտածելու տեղիք տար մեր դպրոցների աշակերտներին, ուսանողներին, ընդհանրապես երիտասարդներին եւ օգներ նրանց այս կամ այն առումներով:*

***Գայանե Բոստանջյան***